28.12.2021
348-72

Պետական եկամուտների կոմիտեի նախագահ
Ռուստամ Բադասյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Բադասյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Արդյո՞ք Կոմիտեն վարում է տեղեկություն ստանալու հարցումների առանձին վիճակագրություն, թե՞ այն ներառված է քաղաքացիներից ստացված դիմումների ընդհանուր վիճակագրության մեջ:

2. Ու՞մ (ո՞ր պաշտոնյայի, բաժնի կամ վարչության) վրա է դրված վերոնշյալ վիճակագրությունը (եթե հարցումների վիճակագրությունն առանձին է վարվում, ապա հենց հարցումների վիճակագրությունը) վարելու պարտականությունը:

3. Ինչպե՞ս (ի՞նչ աղբյուրներից) է ձևավորվում վերոնշյալ վիճակագրությունը (եթե հարցումների վիճակագրությունն առանձին է վարվում, ապա հենց հարցումների վիճակագրությունը), վիճակագրությունը վարող աշխատողը (բաժինը/վարչությունը) ինչպե՞ս է ստանում հարցումների և դրանց պատասխանների քանակի վերաբերյալ կամ անհրաժեշտ այլ տեղեկությունները:

4. Հրապարակվում է արդյո՞ք վերոնշյալ վիճակագրությունը (եթե հարցումների վիճակագրությունն առանձին է վարվում, ապա հենց հարցումների վիճակագրությունը): Եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել համապատասխան հղումը (ակտիվ):

5. Ունի՞ արդյոք Կոմիտեն տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ:

6. Եթե այո, ապա ո՞վ և ի՞նչ ակտով է նշանակված: Խնդրում եմ տրամադրել այդ ակտի պատճենը:

7. Արդյո՞ք Կոմիտեի տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը երբևէ մասնակցել է տեղեկատվության ազատության վերաբերյալ որևէ դասընթացի կամ վերապատրաստման: Եթե այո, քանի՞ վերապատրաստման և ե՞րբ:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան